

## Օնլայն դասընթացներ Դպրաբակի դպրոցի աշակերտների համար

Նախնական պայմանավորվածության համաձայն գործընկեր դպրոցների հետ անցկացվեցին օնլայն դասընթացներ, որի նպատակն էր վերլուծել աշակերտների կողմից ուղարկած առաջադրանքների պատասխանները և ծանոթանալ էլ.փոստից օգտվելու նոր հմտություններին:

Առաջին օնլայն հաղիպումը տեղի ունեցավ ս.թ. ապրիլի 11-ին, որը վարեց Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի ֆիզիկայի ամբիոնի վարիչ Մեխակ Հայրապետյանը Դպրաբակի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ Հմայակ Կիրակոսյանի հետ համատեղ: Դասընթացին մասնակցեցին 9-րդ դասարանի աշակերտները: Հանդիպման ընթացքում քննարկվեցին աշակերտների կողմից կատարված աշխատանքները, հարց ու պատասխանի միջոցով տրվեցին սպառիչ պատասխաններ աշակերտների կողմից հնչած հարցերին:

Հաջորդ օնլայն հանդիպումը, որն անցկացվեց ս.թ. ապրիլի 21-ին, տեղի ունեցավ 7-9-րդ դասարանների աշակերտների հետ: Դասընթացը վարեց Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի ՏՏ կոորդինատոր – պատասխանատու Դավիթ Մինասյանը Դպրաբակի միջնակարգ դպրոցի կոորդինատոր Լիլիթ Օհանյանի հետ համատեղ: Քննարկվեցին էլեկտրոնային փոստի համակարգին վերաբերող հարցեր, աշակերտներին ևս մեկ անգամ բացատրվեց էլեկտրոնային փոստի համակարգից օգտվելու կարգը, աշակերտները սվեցին իրենց հետաքրքրող հարցերը, ծանոթացան Office365 էլ.փոստից օգտվելու նոր հմտություններին:

Լիլիթ Օհանյան,

Դպրաբակի դպրոցի օպերատոր-համակարգող